

Արձանագրություն N 5

«ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

15 հունվարի 2020թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ն.Միքայելյան
Հանձնաժողովի անդամներ՝	Տ.Ասատրյան և Վ.Աթյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա.Հարությունյան

I. «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության հիմնավորման փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.

(Ն.Միքայելյան)

- 1.1. «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանվել 10.01.2020թ.:
- 1.2. <<Գրանթ Թորնթոն>> ՓԲԸ-ի կողմից «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության հիմնավորման փաստաթղթերը ներկայացվել են 09.01.2020թ-ին:
- 1.3. «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.
 - 1.3.1 «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Գրանթ Թորնթոն>> ՓԲԸ-ի կողմից որակավորման հիմնավորման փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետում, սակայն ոչ ամբողջական: Մասնավորապես, <<աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշի գծով մասնակցի կողմից ներկայացվել են միայն համապատասխան աշխատակիցների դիպլոմների պատճենները և վերջիններիս կողմից ստորագրված համաձայնագրերը, ինչի հիման վրա հնարավոր չէր գնահատել աշխատակիցների աշխատանքային գործունեության համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:
 - 1.3.2 Հիմք ընդունելով << կառավարության 04.05.2017թ.-ի No. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի պահանջները՝ ընկերությունը 10.01.2020թ-ին էլեկտրոնային եղանակով ծանուցվել է՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել նաև առաջադրանքի կատարման համար առաջարկվող աշխատակազմի ստորագրված ինքնակենսագրությունները և/ կամ աշխատանքային գրքույկների պատճենները:
 - 1.3.3 <<Գրանթ Թորնթոն>> ՓԲԸ-ի կողմից 13.01.2020թ-ին ներկայացվել են պահանջվող լրացուցիչ փաստաթղթերը: Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են մասնակցի կողմից ներկայացված որակավորման հիմնավորման փաստաթղթերը, և

արձանագրվել է դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

II. «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու և ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ

(Ն.Միքաելյան)

- 2.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի No. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 43-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները՝ «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 2019թ-ի դեկտեմբերի 27-ին հարցում է ուղարկվել ՀՀ ԿԱ ՊԵԿ պահանջվող էլեկտրոնային հասցեներին, և ներկայացվել է «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի մասին պահանջվող տեղեկատվությունը: ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացությունը ստացվել է հունվարի 8-ին, մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվել է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

III. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Ն.Միքաելյան)

- 3.1. Հանձնաժողովը որոշեց.

- ա) ընտրված մասնակցից ճանաչել «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ին՝ գնային և ոչ գնային պայմաններին համապատասխանող և բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:
- բ) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հրապարակել տեղեկագրում:
- գ) սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման օրվանից հաշված 5 օրացուցային օր՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

IV. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

(Ն.Միքաելյան)

- 4.1. «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին, ք. Երևան, Տիգրան Մեծ 4 հասցեում, 7-րդ հարկում:

օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին, ք. Երևան, Տիգրան Մեծ 4 հասցեում, 7-րդ հարկում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Նարինե Միքայելյան



Հանձնաժողովի անդամներ՝

Տաթևիկ Ասատրյան



Վլադիմիր Աթյան



Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Հարությունյան

